Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2017 թվականի հոկտեմբերի 11-ից 13-ը ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Դավիթ Մելքոնյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի պետ-վարչության պետի տեղակալ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Ռուսաստանի Դաշնություն քաղաք Մոսկվա, 2017թ. հոկտեմբերի 11-ից 13-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Միջազգային Տրանսպորտային Ֆորումի Քարտուղարություն:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Միջազգային տրանսպորտային ֆորումի միջպետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների թույլտվությունների չափաքանակների որակական զարգացման վերաբերյալ աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցելու:

- **ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ**

Աշխատանքային խմբի հանդիպմանը մասնակցում էին պատվիրակություններ Հայաստանի Հանրապետությունից, Ռուսաստանի Դաշնությունից, Ադրբեջանից, Բելառուսից, Բելգիայից, Խորվաթիայից, Իսպանիայից, Մակեդոնիայից, Ֆինլանդիայից, Բուլղարիայի, Բոսնիա-Հերցեգովինա, Ֆրանսիայից, Հունաստանից, Հունգարիայից, Իտալիայից, Իռլանդիայից, Լատվիայից, Լիխտեյնշտայնից, Մալթայից, Մոլդովայից, Չեռնոգորիայից,

Նորվեգիայից, Նիդեռլանդներից, Լեհաստանից, Պորտուգալիայից, Ռումինիայից, Մեծ Բրիտանիաի Միացյալ Թագավորությունից, Սերբիայից, Սլովակիայից, Շվեյցարիայից, Թուրքիայից, Ուկրաինայից, ինչպես նաև Միջազգային Ավտոմոբիլային Տրանսպորտի Միությունից: Հրավիրված էր Ղազախստանի ներկայացուցիչը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության կողմից Միջազգային տրանսպորտային ֆորումի շրջանակներում միջպետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների որակական զարգացման մասով իրականացված աշխատանքները, մասնավորապես՝

1. Հայաստանի Հանրապետությունում միջպետական ավտոմոբիլային բեռափոխադրումների իրականացման ժամանակ վարորդների աշխատանքի և հանգստի ռեժիմի օրեսդրական կարգավորումները, որոնք ընդունվել են 2017 թվականին <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> ՀՀ օրենքում և <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենսգրքում իրականացված փոփոխությունների արդյունքում:
2. հանրապետությունում ներդրված թվային տախոգրաֆի համակարգը, որը լիարժեք համապատասխանում է Եվրոմիության դիրեկտիվաների պահանջներին և հնարավորություն է ընձեռնում հայկական փոխադրողների իրականացնելու անվտանգ միջպետական բեռնափոխադրումներ,
3. <<Վտանգավոր բեռների փոխադրման>> Եվրոպական համաձայնագրի անդամակցության վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում իրականացված միջոցառումները և դրա պահանջների հիման վրա արդեն իսկ ընդունված <<Վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարրաներ փոխադրելու մասին>> ՀՀ օրենքը,
4. ծանրաքաշ և մեծ եզրաչափերով բեռների փոխադրման նոր կարգավորումները, որոնք ընդունվել են 2017 թվականին:

Նիստի շրջանակներում քննարկվել է 2019-ից 2022 թվականների համար նախատեսված ՏՆԵԿ թույլտվությունների չափաքանակը:

Քննարկումների արդյունքում որոշվել է 2019 թվականից սկսած ԵՎՐՈ 4 տիպի ՏՆԵԿ թույլտվությունների չափաքանակը յուրաքանչյուր տարի 1 գործակցով պակասեցնել (ներկայումս այն սահմանված է 5 գործակից), համապատասխանաբար ԵՎՐՈ 5 տիպի ՏՆԵԿ թույլտվությունների չափաքանակը 2019 թվականին ավելացնել 1 գործակցով (ներկայումս այն սահմանված է 10 գործակից): Միաժամանակ որոշվեց 2019 թվականից քննարկել ԵՎՐՈ 4 տիպի ՏՆԵԿ թույլտվությունների չափաքանակի պակասեցման հաշվին ավելացնել ԵՎՐՈ 6 տիպի ՏՆԵԿ թույլտվությունների չափաքանակը (ներկայումս այն սահմանված է 12 գործակից): Որի նպատակն է անդամ պետություններում էկոլոգիապես մաքուր բեռնատար տրանսպորտային միջոցների շահագործման խրախուսումը:

Միջոցառման ընթացքում քննարկվել է նաև Հունաստանի կողմից ներկայացված հայտը՝ 2019 թվականին շարունակելու ԵՎՐՈ 3 տիպի ՏՆԵԿ թույլտվություններով անդամ պետությունների տարածքում փոխադրումների իրականացման վերաբերյալ:

Քննարկման արդյունքում որոշվեց հայտը չբավարարել, քանի որ բոլոր անդամ պետություններին 2015 թվականից սկսած չեն տրամադրվում ԵՎՐՈ 3 տիպի ՏՆԵԿ թույլտվություններ:

Քննարկվեց նաև ՏՆԵԿ թույլտվություններով անդամ պետությունների տարածքում փոխադրումների իրականացման սահամանափակումների հանման հարցը (ներկայումս փոխադրողը իրավունք ունի առանց տրանսպորտային միջոցի հաշվառման երկիր վերադառնալու իրականացնել 3 երթ): Որոշվեց երեք երթի իրականացման սահմանափակման հանումը իրականացնել փուլային տարբերակով, որի վերաբերյալ հարցը պետք է քննարկվի 2018 թվականի մարտին Փարիզում Նախարարների հանդիպման ժամանակ:

Միաժամանակ օրակարգային հարցերից էր Եվրոմիության ոչ անդամ երկրներում (դրանք 13 են) միջազգային տրանսպորտային ֆորումի միջպետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների թույլտվությունների չափաքանակների որակական զարգացման ներդրման վերջնական ժամկետի երկարաձգման հարցը, որի քննարկան արդյունքում

որոշում կայացվեց նախնական ժամկետ սահմանվել 2018 թվականի հուլիսի 1-ը կամ 2019 թվականի հունվար 1-ը, իսկ հիմնական որոշումը կկայացվի 2018 թվականի մարտին Փարիզում Նախարարների հանդիպման ժամանակ:

Աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում քննարկվեց նաև ՏՆԵԿ թույլտվությունների թվայնացման հարցը:

Քարտուղարության կողմից ներկայացվեց ՏՆԵԿ թույլտվությունների նոր պաշտպանիչ միջոցների կիրառումը, որի վերաբերյալ քարտուղարությունը անդամ երկրներին կտեղեկացնի պաշտոնապես: Միջոցառումը նախատեսված է բացառելու ՏՆԵԿ թույլտվությունների կեղծումը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Դավիթ Մելքոնյան

17.10.2017թ.